պետութեան առաջին կարգի շքանշանի զականակուռն։

Ամսագրոյս յաջորդ թուով արժան կը համարիմք հաղորդել Ազգայնոց մերոց Կայսեր հրովարտակին և փոխարքային գրութեան օրինակները։

ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԲ.

Կուսակալ Կեդրոնական Նահանգին Դարնոյ և հրամանատար Ասիոյ (կամ Չորորդ) բանակին Թուրքիոյ Վ. սեմափայլ Մուսթաֆա Փաշայն, և եղբօրորդի Շահին ալքայազուն իշխան Վ. սեմափառ Համզա-Միրզա-Հէշմէթ-(Տէօվլէթ) Տէվլէթ սպարապետն—որոց առաջինն ի դիմաց Օգոստ. Կայսեր Թուրքիոյ և միւսն ի դիմաց Օգոստ. Շահին Պարսից լիազօր դեսպանութեամբք եկած էին առ ի շնորհաւորել զգալուստ Օգոստ. մեծազօր Ինքնակալ Կայսերն Ռուսաց ի Տփխիս,—այցելութեամբք առ Վ. եհափառ Հայրապետ մեր՝ և փոխադարձով Նորին Սրբութեան՝ սիրալիր համակրութեամբք և արժանավայել մեծարանօք և յարգանօք պատուեցին զմիմեանս։

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ.

Վ. եհափառ և Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց անուանակոչութեան տօնախմբութիւնը ի 26-ն ամսոյս վայելուչ հանդէսներով կատարուեցան թէ աստ և թէ ի Տփխիս։

ՀԱՐՑԱՓՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՇԻՒ

ՀՈԳԵՒՈՐ ԱԶԳ. ԴՊՐՈՑԻՆ ՀԱՑՈՑ ԱՐՑԱԽՈՑ

(Ըրցախոյ Հայոց Ազգ. Հոգև. Դպրոցին Հոգաբարձութիւն մատուցանելով Վ. եհ. Կաթողիկոսին հետևեալ յայտարարութեամբ Դպրոցին հարցաքննութեան՝ աշակերտաց թուոյն և եկամտից վերայ կարևոր տեղեկութիւնք՝ արժան կը համարիմք զայնոսիկ հաղորդել ի գիտութիւն Ազգայնոցս Երարատայ միջոցաւ)։

Խմբագրո-Ընկեր Երարատ Ամսագրոյ։

Ի Հոգաբարձութեանս յայսմիկ լուան զզեկուցումն—Տէր Նախագահն և Անդամք Հոգաբարձութեանս և պաշտօնակատարն տեսչի Հոգևոր Դպրոցին Հայոց Ղարապաղու արժան վարկան՝ համաձայն 5—րդ յօդ". Զ). գլուխ. կանոնադրութեան նոյն Դպրոցին՝ պարգևատրել այսօր (18 Յուլիսի) ի վերջ հարցաքննութեան աշակերտաց Դպրոցին, որ և յաւուր հանդիսի պարգևաբաշխութեան նոցին՝ զ43 յառաջադէմ աշակերտս զանազան դպրոցապատկան մատենիւք, և վարձատրել զ36 աշակերտս գովասանական թղթովք, որք յասպարիզի հարցաքննութեան տարբոյս՝ ցուցին զյառաջադիմութիւն ի գիտութիւնս և ի կարևոր մակացութիւնս ուսմանց իւրեանց. և որք, որպէս յայտնի է, տէր են գովանի վարուց և բարուց։ Պարգևատրեալ մատեանքն են այսոքիկ—,,Ներածութիւն Աստուածաբանական գիտելեաց՝ 8 հատ, Ներքին կեանք հին Հայաստանի՝ 19 հատ և համառօտ աշխարհարար Ազգային պատմութիւն՝ 16 հատ,,, ընդամենն քառասուն երեք հատ, իսկ գովասանական թուղթքն երեսուն վեց հատ։ Սահմանեցին— ցուցակագրել զանուանս աշակերտաց պարգևատրելոց և վարձատրելոց մատենիւք և գովասանական թղթովք, զորս և յետ կնքելոյ կնքովք Հոգաբարձութեանս՝ նուիրել նոցա համաձայն ցուցակագրեալ թերթին։ Իսկ զմի օրինակ ուղիղ պատճէնի յաւուր հանդիսի պարգևաբաշխութեան կազմեալ վկայարանութեանն մեջ և

ծախուց արդեանց Դպրոցին սկսեալ ի 1 էն Յուլիսի 1870 ՅԼ այսր Յուլիսի, նաև ապառկացն ելն. մատուցանի ամենախոնարհաբար ի տես Վեհափառութեան Ձերոյ։

Վիճակաւոր Առաջնորդ Պարարաղու,
որ և Նախագահ Հոգաբարձութեան
ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Անդամք

Ոսկեան Հոն. Տէր Իսրայէլեանց.
Յովհաննէս Հոն. Մախմուրէանց
Յակոբոս Աղամալեանց
Գրիգոր Պոլեանց

Ատենադպիր Ս. Հասան Ջալալեանց

Ի 1871 -դ 18 Յունվարի
Ի Ք. Շուշի։

ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳ. ՀՈԳ. ԴՊՐՈՑԻՆ ԱՐՑԱԽՈՑ։

Նախընթաց Յունիս ամսոյ 21 -ին սկսաւ Պարարաղու Ազգային Հոգևոր Դպրոցի հրապարակական հարցաքննութիւնն առաջի տարիներէն տարբեր, շքեղ և հանդիսաւոր կերպով։ Դպրոցի Հոգաբարձութիւնն իւր ջանադիր հոգացողութիւնը և դաստիարակաց արենալից աշխատութիւնը և ուսումնարանի տարեցոյս արդիւնաբեր յառաջադիմութիւնը աւելի պարզ և ակներև կացուցանելու համար, նախ՝ ոչ միայն նախընթաց տարիներու պէս ի ձեռն քահանայից իւրաքանչիւր եկեղեցեաց մէջ ծանուցմամբ, այլ և անձին առանձին յականէ յանուանէ հրաւիրական թղթերով քաղաքիս եկեղեցականները, աղնուականները, վաճառականներէն մեծ մասը և ամենայն արհեստաւորաց գլխաւորները հանդերձ իրանց արհեստակիցներով հրաւիրեց հարցաքննութեան հանդիսին ներկայ գտնուիլ։ Երկրորդ՝ սահմանեց որ իւրաքանչիւր դասարանի աշակերտաց, օրը միայն մէկ առարկայի մանրամասն և մանրակրկիտ հարցաքննութիւն լինի. Ուսման նիւթերն էին կրօն, Հայերէն, Ռուսերէն, Գաղղիերէն, ազգային պատմութիւն և աշխարհագրութիւն Հայաստանի, թուաբանութիւն, ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն։ Այսպէս կարգաւ շարունակվելով անցեալ Յուլիսի 15 -ին վերջացաւ, գրաւելով հանուր ժողովրդեան զարմանքը և ուրախալից զգացմունքը։

Ցանկալի էր տեսնել, որ Շուշոյ Հայկազն քաղաքացիք, որոնք այսօր հանուր Հայ ազգին մէջ պատուաւոր և ուսումնասէր ժողովուրդներէն մէկն են, ի վերջոյ իրենց Վեհափառ սուրբ Հօր խնամակալու ազդեցութեամբ և իրենց սրբազան Առաջնորդի բարեհամբոյր կառավարութեամբ կուսակցութեան ոգին մերժելով, քաղցր և խաղաղասիրական սրտով խմբովին իրենց մատաղ սերնդոց ուսումնական պտուղներն վայելելու կղզումին։ Հարցաքննութեան դահլիճը, մինչդեռ առաջին տարիները դատարկ, իսկ այս տարի բանիբուն և պատուաւոր թէ՝ եկեղեցական և թէ՝ աշխարհական հանդիսականաց զուարթադէմ և խուռն բազմութեամբ լիքն էր։ Այո, այս մի գեղեցիկ յոյս և բերկրարիթ նշան է, որ այսուհետև ըստ ամենայնի պիտի գուն գործեն իրենց այս ազգային երջանկութեան լուսավորը միշտ իւր արդի պայծառութեան և բարեկարգութեան մէջ պահպանել համաձայն իւր նպատակին Հայաստանեայց ուղղափառ սուրբ եկեղեցւոյ հիման վերայ անխախտ ունելով սորա մնաւոր շինուածը։

Աշակերտները զանազան ուսմանց և լեզուաց մէջ ըստ բաւականին յառաջադիմութիւն ցոյց տուին, իսկ հայկաբանութեան մէջ արդարև ընքանչելի. բայց չկարծէ սիրելի ընթերցող մեքենական վարժութեամբ և պատասխանատուութեամբ, որն որ դժբախտաբար մինչև անցեալ տարի քաղաքիս մէջ կ՚շարունակուէր մէկ քանի պատուարժան դաստիարակաց ձեռօք, որով հարիւրաւոր աշակերտելոց թանկագին ժամանակը ի կորուստ կ՚մատնուէին ի զուր և ապարդիւն բոլորովին, և մայրենի լեզուի ուսումն իսկապէս և իրաւամբ դժուրք համարուած էր, այլ գործնական կրթութեամբ և յառաջադիմութեամբ, վասն զի Աստուածաշունչը և մեր նախնեաց ընտիր մատենագրութիւններէն Խորենացին և Եղիշէն ի գրաբառ յաշխարհաբառ պարզ և յստակ թարգմանելէն զկնի, նոցա վերայ քերականական կանոնները մը-

տաւոր և քաջակիրթ հմտութեամբ որոշեցին, այս մատեաններից զանազան նիւթեր առնելով նոյն իսկ առենի մէջ գրաբառ լեզուով և տարբեր և չքնաղ ոճով շարադրութիւններ գրեցին, նա և այլ և այլ աշխարհիկ գրուածները գրաբառի վերածեցին, և որ աւելի զարմանալին էր, հանդիսականներէն առանձին բնաբան առաջարկուեցաւ, որոյ վերայ ի ներկայութեան խուռն բազմութեան յանպատրաստից, անսխալ գրաբառ լեզուով, վայելուչ ոճով և գեղեցիկ իմաստներով գրեցին, որով ամէնքը ուրախութեան և զարմանալեաց զգացմամբ լցուցին,

Բայց զուցէ մերազնեայ մէկ քանի իմաստակ պատանեաց, որոնք ըստ ասից Լամբրոնացւոյն «Զորագէտ նստած ի Կիլիկիայ այս դպրոցը կը յաչաղեն, գրածներս անհաւատալի թուի, հոգ չէ, թող գիտեան այդ Պարոնները որ ես սուտ յոյսերով ուրիշներին խաբելու միտք չունիմ: Ճամարտակութեանց և մեծարանութեանց թէ որ հաւատացող միշտ քիչ էր, ես առաւել այժմ գիտեմ որ հաւատացող չկայ, այլ եղածը ճշմարտութեամբ կը գրեմ, իմ փոյթ չէ, որ ոմանք լսելով չարակնութեան ախտով պիտի տապին տաղնապին, ինչպէս որ աղքատը հարստի ճոխութիւնը տեսնելով, բաւական է որ, ճշմարիտ ազգասէր անձինք պիտի ուրախանան. իմ փոյթ չէ որ դպրոցի յառաջադիմութիւնն ոմանց թեթեւամտութիւնը պիտի շարժէ, ուրիշներու հինօրեայ կիրքը պիտի արծարծէ, և ոմանց անբարեսէր նպատակը պիտի խորտակէ, ես արդարութեամբ իմ տեսածս կ'գրեմ նշանախեցին անգամ երաշխաւոր եմ, նոյն իսկ այն պարոններին կ'հրաւիրեմ, փոխանակ հեռուից կամ ծածուկ ղըպարտութեամբ և ստութեամբ մի ազգային լրագրի էջերը լցնելու, եթէ հնար է անձամբ գալ և տեսնել, եթէ ունին կարողութիւն անձամբ քննել, կատարելապէս վստահ եմ որ, իրենց դարձին իրենց հետ պաշար պիտի տանեն ոչ այլ ինչ այլ լիուլի ամօթապարտութիւն, Ես դառնամ դէպի նկարագրիս շարունակութիւնը,

Ամսոյս 18—ին Դպրոցիս ծառաղարդ գաւթին մէջ կատարուեցաւ Ուսումնարանիս պարգևաբաշխութեան վայելուչ հանդէսը, որուն նախագահ բաղմած էր քաղաքիս առաջնորդ Սրբազան Սարգիս Արքեպիսկոպոսն, և ապա ըստ կարգի՝ քաղաքիս եկեղեցականները, Դպրոցիս հոգաբարձուք և ուրիշ պատուարժան քաղաքացիք, Երբ որ դըպրոցական երաժիշտ մանկանց քաղցրանուագ երգոց ձայները հնչուեցան, ժողովուրդն ամէն անձանց խուռն բազմութիւն, որոնք նախընթաց օրերու հարցաքնութիւններէն ուրախութեամբ զգացուած էին, փութացան նա և այս հանդիսներկայ լինելու, շատ սրտաուչ տեսարան էր. սէր, միութիւն և յուսապատար խնդութիւն հաւասարապէս կ'փայլէին հանդիսին մէջ. բոլոր աշակերտները հանդիսականաց շուրջ բոլորած էին ըստ իւրաքանչիւր դասարանի՝ կարգ կարգ, որոնցից տասնի չափ նախ սկսան իրենց չափածոյ զանազան գրուածները կարդալ. և ամէն մէկ գրուածք կարդացուելէն զկնի, անմիջապէս երգեցիկ աշակերտք կ'երգէին, և ապա Դպրոցիս հայկաբանութեան և ազգային պատմութեան ուսուցիչ պատուելի Մաղաք Պլուզեանն կարդաց ճառ, զոր ընդ այսմ արժան կ'համարիմ ուղարկել ի հրատարակութիւն. յետ որոյ Դպրոցիս տարեկան հաշիւն կարդացուեցաւ. սորանից յետոյ սրբազան Առաջնորդն մի սրտաշարժ ատենախօսութիւն արաւ, որոյ գլխաւոր իմաստներն էին, յորդոր առ ժողովուրդ իրենց ազգութիւնը Հայաստանեայց ուղղափառ սուրբ եկեղեցւոյ վարդապետութեամբ, ճշմարիտ ուսմամբ և պիտանացու գիտութիւններով պահպանել. երկրորդ՝ ազգային Դպրոցաց օգուտը և նոցա փրկաւէտ ազդեցութիւնը, Նորին Կայսերական առատագութ խնամքը առ ազգս մեր և առ ուսումնարանն, և մեր Վեհափառ սուրբ Հօր առ այնս ամենայն ջանիւ ուշադրութիւնը, Երրորդ՝ յայտնեց իւր անկեղծ ուրախութիւնը դպրոցիս իննամեայ անակնկալ յառաջադիմութեան վերայ, յարելով զկնի «կենացս մէջ ինձի համար միակ փառք և սրտի կատարեալ ուրախութիւն եղած է միշտ և պիտի լինի որևիցէ ազգային ուսումնարանի յառաջադիմութիւնը տեսնելը, ուսումնարանաց օգտին աշխատելը, ուսումնարանաց յառաջադիմութեան համար նահատակուիլը, ուսումնարանաց անվթար պահպանութեան համար տքնիլը, ահա այս ուրախութիւն որ իմն է, լցեալ է», Տացէ Տէր, որ մեր ազգային բոլոր ուսումնարան-

ները այսպէս իրենց նպատակին համեմատ բարեկարգուին, Հայաստան այլս ուղղափառ կրօնի վարդապետութեամբ զարգանան, հայ հոգւով բարգաւաճին, և այն լուսաւորութեամբ, յառաջադիմեն, որուն կ'փափաքի մեր ուսումնակարօտ ազգը։ Տացէ Տէր մեր Վեհափառ Հայրապետին կարողութիւն, որ ինչպէս ժրաջան տքնութեամբ ազգային լուսաւորութեան գործը սկսած է Դպրոցաց բարեկարգութեամբ նոյնը և յաջողութեամբ ի գլուխ տանէ։ Յետ այսորիկ դարձեալ աշակերտաց մէկ քանիսին այլեւայլ նիւթերու վերայ շարագրութեան յանկարծական փորձերը առաջարկուեցան, և մինչ նոքա գրելու հետ էին, երկրորդ և առաջին դասարանաց աշակերտներէն ոմանց համառօտ հարցաքննութիւն եղաւ պատմութեան և լեզուի նիւթերէն, որոնք մեծ յաջողակութեամբ պատասխանեցին, և յիշեալ աշակերտները երբ որ իրենց գրուածքը աւարտեցին ատենի մէջ կարդացին, մեծամեծ գոհութեան և շնորհակալեաց արժանի եղան։ Աշակերտներէն ութսուներկուքը գովասանական թղթերով և մատեաններով վարձատրուեցան, որոնց ինն իրենց՝ Դպրոցին մէջ ուսման սահմանեալ ընթացքը աւարտելով, վկայական ստացան, և ապա երգով հանդէսն վերջացաւ և հանդիսականները մեկնեցան յուսապատար խնդութեամբ, օրհնելով զտուիչն ամենայն բարեաց Աստուած։

Գրիգոր Խահանայ Տէր Ղազարեանց

Ի 1871 մի 10 դեկտեմբերի

Ի Փ. Շուշի

Խմբագրութեան Ընդարձակ ամփոփում.

Հոգաբարձութիւնս ընդ այսմ առաքելով ի Խմբագրութիւնդ զհամառօտ հաշուեցուցակս մտից և ծախուց արդեանց և թուոց ուսուցչաց, աշակերտաց ևլն. Ազգային—Հոգևոր դպրոցին Հայոց Ղարապաղու, կազմեալս ի 18 անցեալ Յուլիսի յաւարտ հանդիսի տարեկան հարցաքննութեան և պարգևաբաշխութեան աշակերտաց Դպրոցին,—խնդրէ յարգանք հրատարակել զայնս ընդ ձեռն պատուական "Ա բարատ" ամսագրոյդ ի տեղեկութիւն համազգեաց մերոց։

Անդամք Հոգաբարձութեան

Սիմեոն Վրդ. Յարութիւնեանց
Յովհաննէս Վրդ. Մաքսուդեանց
Գրիգոր Ղազարեանց
Օգաստրիա Ալամալեանց
Յակոբ Մելիք-Շահնազարեանց
Աւետիս Ս. Հասանջալեանց

Ի 14 Օգոստոսի 1871 մի
Ի Փ. Շուշի

ՎԿԱՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Ի 18 ն Յուլիսի 1871 ամի յետ աւարտման տարեկան հրապարակական հարցաքննութեան աշակերտաց ազգային—Հոգևոր դպրոցին Հայոց Ղարապաղու, սկսելոյ ի 21 էն անցելոյ Յունիսի և աւարտելոյ ի 15 այսր ամսոյն վասն վերջին և առաջին վեց վեց ամսոց 1870 և 1871 ամաց այն է՝ ի 1 էն Յուլիսի անցեալ 1870 ամի ցՅ1ն Յուլիսի այսր 1871 ամի՝ ի ներկայութեան Վեհաշնորհ առաջնորդին Ղարապաղու, որ և նախագահի Հոգաբարձութեանս, Գերապատիւ Սարգիս Արք Եպիսկոպոսին և Հոգաբարձուաց նորին, ևս և Հայոց հասարակութեան Շուշի քաղաքի,—կազմեցաւ սոյն այս վկայաբանութիւն, և ըստ ի յայտ եկեալ ի կազմեալ ցուցակէն յառաջադիմութեանց վարուց և բարուց աշակերտացն, երևեցաւ այսպէս—Նախ՝ թէ՝ պարգևատրեցան դպրոցապատկան մատենիք 43 յառաջադէմ աշակերտք։ Երկրորդ՝ վարձատրեցան գովասանական թղթովք 36 աշակերտք։ Երրորդ՝ փոխատրեցան դասատետնէ ի դասատուն, այն է ի ծխական նախակրթարանէն՝ յառաջին դասատուն 35 աշակերտք։ Յառաջնոյն՝ յերկրորդն՝ 25 աշակերտք։ Յերկրորդէն՝ յերրորդն 12 աշակերտք, յորմէ և 9 աշակերտք աւարտեալ զուսումն իւրեանց՝ արժանաւորեցան ուսման վկայականաց՝ և արձակեցան։

Դպրոցն՝

Ի Հոգևոր Դպրոցին գտանին չորս դասատունք, յորոց մին է ծխական—նախակրթարան՝

յորում են աշակերտք	105
Յ1-ին դասատան աշակերտք	41
Յ2-րդ դասատան ,, . . .	26
Յ3-րդ դասատան ,, . . .	10
Գումարն	182

— Յորոց՝

Հոգևորական աշակերտք	26
Ազնուականք ,, ...	15
Հարկատուք ,, ...	141
Գումարն	182

Թվ- Ո-սոս-ցլաց դպրոցին.

Պաշտօնակատար տեսչի	1
Ուսուցիչք	8
Վերակացու	1
Գումարն	10

Ի Խորհրդարանի Հոգաբարձու-Ընտրեալ դպրոցին

Նախագահ	1
Հոգաբարձուք—Քահանայք և աշխարհականք .	8
Փոխանորդք նոցին	6
Ատենադպիր , ...	1
Գրագիր . . . . . , . . .	1
Գումարն՝	17

Արդիւնք դպրոցին՝ մտեալք ի Հոգաբարձութիւնն նորին ըստ կսեալի 1-էն Յուլիսի 1870 ամի ցՅ1ն Յուլիսի 1871 այսր ամի հանդերձ մնացորդովքն յանցելոց ամաց՝ են . . . . 10·713 ռ. 58 3/4 կ.

Իսկ ծախք ի նոյն ժամանակս. 5·169 ռ. 40 կ.

Զորս հանեալ ի մտից գումարոյն մնայ առ 1-ն Յուլիսի 1871 ամի առձեռն պատրաստ գումար՝ . . . . . 5·544 ռ. 18 3/4 կ.

Տարեկան ռոճիկք միմիայն ուսուցչաց դպրոցին՝ որք գտանին ի միջի յիշեալ ծախուցն՝ են՝ 2020 ռ.

Ծանօթ. 1) Ի մնացորդ 5544 ռուբլի 18 3/4 կ. գումարոյն՝ 1500 ռուբլին են ճնրմակ մամ ի դպրոցապատկան կրպակին մոմավաճառութեան.

Ծանօթ. 2) Դպրոցապատկան ապառիկք անցեալ ժամանակաց, այն է՝ ի 1861 ամէ մինչև ց1871 ամն ի վերայ զանազան անձանց և տեղեաց ընդ ամենն՝ 3783 ռ. 42 1/2 կ. որք են սրբագրամբ ի վերայ ժողովրդականաց մեծաւ մասամբ քաղաքիս և մասամբ ինչ գիւղօրէից վիճակին 1320 ռ. 80 կ.

Մի մի ռուբլի սրբագրամբ ի վերայ քահանայից գիւղական՝ . . . . . 162 ռ.

Ի վերայ վանքապատկան կալուածոց և այգիստեարց՝ . 551 ռ. 65 կ.

Կտակագրամբ հանդուցեալ Մետրապօլիտն Բաղտասարայ ի վերայ Կուսապատեցի Սարգիս Բէկի Ամիրէկեանց՝ . . . 608 ռ. 64 1/2 կ.

Պարտք ի վերայ կոնսիստորիային Դարապաղու՝ . . 500 ռ.

Ի վերայ Տփխիսեցի Գաբրիէլի Հեջուբեանց՝ . . . 263 ռ. 33 . կ

Զանազան արդիւնք ի վերայ զանազան անձանց՝ . . . . 369 ռ.

Գումարն 3783 ռ. 42 1/2 կ.

Յորոց մասին արդէն ի Հոգաբարձութեանս շարունակի դրագրութիւն վասն ի ձեռս բերելոյ զայնոսիկ ապառիկս, և թէ որչափ ունին ի ձեռս գալ, անյայտ է առ այժմ.

Ծանօթ. 3) Առանձին նուիրագրամբ բարեպաշտ իշխանաւորաց քաղաքիս, ստորագրեալք յառանձին ժապաւինեալ մատենի յօգուտ Դպրոցին են՝ . . . . . 17·326 ռ. 34 3/4 կ.

Յայսմ գումարոյ ստացեալ է ցարդ ի Հոգաբարձութեանս միմիայն՝ . . . . . 712 ռ. 89 կ.

Որք մտեալ են ի զանգուած յիշեալ դպրոցապատկան գումարոյն.

Վիճակաւոր Ազգաբնակ Ղարապաղուոր և Ալախանահ Հոգաբարձու-Ընտրեալ

ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ընդամ.

Սիմեոն Վրահ. Տ. Խորայելեանց
Յովհաննէս Վրահ. Մախմուրեանց
Օհանէս Եղամալեանց
Գրիգոր Ալուլեանց
Ասէն Հասանջալալեանց

ՀԱՄԱՌՕՏ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ

Մոկս և Ժախոց սրբոյն Աղբային-Հոգեւոր Դպրոցին Հայոց Պատրաստարան ակսեալ է 1ԷՆ Յունուր 1870 ամի յ1Ն Յունուր 1871 ամի. այն է՝ յընթացս մի ամի ազգ գրոյ, փաղեալ է Ժապա-ինեալ մատենից նոյն ամաց։ Կազմեալ է 18Ն Յունուր 1871 ամի։

ՏԵՍԱԿԻ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ

Տարեկան գումար է 1ԷՆ Յունուր 1870 ամի յ1Ն Յունուր 1871։

	Ռուբ.	Կոպ.
20 20 կոպ. սրբադրամ Յիսրաքանչիւր գերդաստանէ Շուշի քաղաքին և գաւառին	1700	10
Մի մի ռուբլի սրբադրամ ի քահանայից գիւղօրէից	186	
Մասն յարգեանց վանքապատկան կալուածոց	1377	80
Արդիւնք ի վանքապատկան անտառաց	355	
Կամաւոր նուէրք ի պսակատեարց	364	13
Մասն յարգեանց կրպակին մոմավաճառութեան	56	
Խաչահամբոյր արդիւնք ուխտատեղեաց	369	67½
Նուիրադրամք վկայականաց վասըն ծննդեան և մկրտութեան .	150	
Գանձանակադրամք յանուն սրբոյ վանիցն Գանձասարու . .	48	43¾
Գանձանակադրամք յօգուտ դպրոցին	136	83
Տարեկան հասոյթ ուսման աշակերտաց դպրոցին	93	
Վարձ սենեկաց ծխական դպրոցին ստացեալք յեկեղեցեաց քաղաքիս	40	
Դրամք վերադարձուցեալք ի գին գրքուկաց	5	
Առանձին նուիրադրամք նուիրատուաց	40	
Գումարն մտից	4921	97¼

Ցընթացս նոյն իսկ ժամանակի ի դպրոցապատկան ապատիկ և ի մնացորդ արդեանց վասն նախանցեալ ամաց հոգատարութեամբ Տեառն Նախագահի Հոգաբարձութեանս, Գերապատիւ Սարգիս Ս՚բք-Եպիսկոպոսին և ներկայ Հոգաբարձուաց՝ ի ձեռս են բերեալ զանազան մեծ և փոքր գումար դրամոց, ընդ ամենն՝ 5522 62½

Որք ի միասին են 10444 59¾

ԾԱԽՔ Ի ՆՈՑՆ ԺԱՄԱՆԱԿՍ

	Ռուբ.	Կոպ.
Ռոճկադրամք ուսուցչաց և վերակացուին	2173	46
Ռոճկադրամք վերատեսչին վանքապատկան կալուածոց, Ատենադպրի Հոգաբարձութեան, դրագրի և ծառայի նորին	545	62
Տուեալ եղև ի գին մոմոյ ի պէտս կրպակին մոմավաճառութեան	1500	
Վարձ տան ի պէտս զետեղման դպրոցին, խորհրդարանի դպրոցին վասն երկուց ամաց	800	
Անհրաժեշտ ծախք արարեալք ի վերայ վանքապատկան կալուածոց	690	
Դիւանական մանր ծախք . .	187	56
Սննդադրամք միաբանաց վանօրէից	301	66
Գործակատարին և աշակերտաց դպրոցին վարձատրութիւնք . .	110	
Ի գին թղթոց ի պէտս տպագրութեան Լուսաշաւիղ և Ուսուցարան մատենից	199	60
Ի գին գրքուկաց	55	50
Ճանապարհածախք նշանագրողաց բահրայ արդեանց վանքական կալուածոց	26	
Վարձ մշակաց ի պէտս քակտելոյ ղՀին շինութիւնն դպրոցին (ամբար)	80	
Գումարն ծախուց	6669	40

Զորս հանեալ ի վերոյգրեալ

գումարոյն՝ մնայ՝ 3775 19 3/4

Ծանօթութիւն 1) Յայսմ գումարոյ 2783 ռուբ. 65 կոպ. տուեալ են ի դին 3000 ռուբլւոյ արժողութեան երեք հատ բանկովիչ մի մի հաղարանոց բիլեթաց առաջին փոխառութեան։

2) Գոն այլ ևս դպրոցապատկան ապառիկ մեծ և փոքր գումարք դրամոց, ի նախանցեալ ժամանակաց մնացեալք ի վերայ զանազան անձանց. ուստի Հոգաբարձութիւնս հոգ տանի ստանալ և զայնոսիկ։

Անդամք Հոգաբարձութեան

Սիմէօն Պահ. Տ. Խորայէլեանց
Յովհաննէս Պահ. Մախսուդեանց
Գրիգոր Լուլեանց
Օհանջիայ Աղամալեանց
Յակոբ Մելիք-Շահնազարեան
Աբրահամ Ս. Հասանջալալեանց։

ՏՈՒՏԱԿ

Թոռոյ ռոռոցլաց, աշակերտաց, վերակացուաց Հոգևոր Դպրոցին Հայոց Պարապուղաց, նաև Հրէայապրեալ, փոխադրեալ և ռոռոնուսարդ աշակերտացն.

Կոչեալ է 18 Յունվարի 1871 թվին

Հոգևոր Դպրոցն Հայոց Պարապուղաց որ ընդ նախակրթարանին են ըստ դասատանց։

Թիւ Ուսուցչաց	9
,, Աշակերտաց	182
,, Վերակացուաց	1
,, Պարգևատրեալ աշակերտաց .	79

Թիւ փոխադրեալ դասատանէ ի դասատուն աշակերտացն

Յ1-ն	Յ2-ն	Յ3-ն
36	25	13

Ուսումնասիրտ աշակերտք են 9

Ծանօթութիւն։ Ուսանելի առարկայքն են՝ 11. այն է՝ Կրօն, Հայերէն, Ռուսերէն և Գաղղիերէն լեզուք, պատմութիւն Հայոց, աշխարհագրութիւն Հայաստանի, Թուաբանութիւն, Ընդհանուր աշխարհագրութիւն և պատմութիւն, վայելչագրութիւն և երգեցողութիւն։

Անդամք Հոգաբարձութեան

Սիմէօն Պահ. Տ. Խորայէլեանց
Յովհաննէս Պահ. Մախսուդեանց
Օհանջիայ Աղամալեանց
Գրիգոր Լուլեանց
Յակոբ Մելիք-Շահնազարեան
Աբրահամ Ս. Հասանջալալեանց։

ԲԱԳՈՒ

Խմբագրութեան Երրորդ Եռամսեայ

Տարակոյս չկայ, որ մեր պատուական Հայրենակիցներն լսած կլինին այն հիւանդութեան (խոլերայի) լուրն, որ կեղրոնացաւ այս տարի Յուլիս ամսոյ 28 ից։ Ուստի ահա առաքելով Խմբագրութեանդ այս երկտող բանի հետ մի բանաստեղծութիւն "Խոլերայ" վերնագրով, յուսով եմ, որ կը բարեհաճէք զետեղելու նորան Ձեր պատուական "Արարատ" ամսագրի թերթերում։

Եթէ ճշմարտութիւնը մի լուսավառ ճրագ է, որ չէ կարելի թագցնել ոչ մի ծածկոյթի տակ, ուրեմն, ես չեմ կարող չյիշել և չխոստովանել այն իրողութիւններն, որոնք մեզ ժամանակներս լոյս տեսան այստեղ։

Այն ահռելի հիւանդութեան ժամանակ, մեր Բագուայ Հայկական ժողովրդեան մէջ հանդիսացաւ մի վեհանձնական Հոգի, որն տեսնելով իրա փոքր հօտի սրտաբեկութիւնն և թափառականութիւնն այս և այն ծածկոցների տակ, արիացած Քրիստոնէական սուրբ հաւատով, թռչում էր տանից ի տուն քաջալերում սուրբ գրքերի բացագրութիւններով, որ այս ախտը ոչ մի բանով չէ դուրս գնալ, եթէ ոչ՝ աղօթիւք, պահօք և ողորմութեամբ։

Նա ոչ միայն Աստուածային սրբազան վկայութիւններովն էր խրախուսում և քաջալերում ժողովրդեան, այլ մինչև անգամ իրա սեփհականութիւնից ևս օգնում էր դեղոյայքով անտէր և անօգնական Հայկական անդամներին, որոնք